ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2018 թվականի հունվար ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2018 թվականի հունվար ամսվա ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 2980.7 մլն դրամ՝ պլանավորված 2600.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 14.6 տոկոսով կամ 380.7 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 88.8 տոկոսով կամ 1402.2 մլն դրամով: Հաշվետու ամսվա ընթացքում «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքին համապատասխան ԱՀ պետական բյուջե մուտքագրված դրոշմանիշային վճարները կազմել են 399.0 հազ. դրամ:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 88 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 3 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 11 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են շուրջ 32.5 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 10 ստուգում՝ 3.5 մլն դրամ գումարով:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 61 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 38-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 4-ը՝ ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 3-ական՝ հարկային հաշվանցումների և վերադարձի հիմնավորվածության, վարձու աշխատողների գրանցման ճշտության, ապրանքանյութական արժեքների մնացորդի ու պիտանիության ժամկետը լրացած ապրանքների դուրսգրման գործընթացի և 7 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 1 վարչական գործ՝ շուրջ 24.8 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 29 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 47.5 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 61 վարչական գործով սահմանվել է շուրջ 0.9 մլն դրամ վարչական տուգանք:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 10882 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 8447:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 66 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 75 վարձու աշխատողի՝ 12.6 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 26 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

ԱՀ ֆինանսների նախարարի հրամաններով «Հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների» ձևերը, «Շահութահարկի հաշվարկի» ձևն ու լրացման կարգը, «Հարկային մարմնի կողմից հավաքագրվող հարկատեսակների և այլ պարտադիր վճարների հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման համակարգի ներդրման ժամանակացույցը» ու «Ֆիզիկական անձանց գույքահարկի և հողի հարկի ծանուցագրերի ու անդորրագրերի» ձևերը համապատասխանեցվել են 2018 թվականի հունվարի 1-ին հարկային օրենսդրությունում կատարված փոփոխություններին:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսում ԱՀ ՖՆ պատվիրակությունը՝ ՖՆ առաջին տեղակալ Արթուր Հարությունյանի գլխավորությամբ գործուղվել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե, որի ընթացքում մասնագիտական քննարկումներ և փորձի փոխանակում է իրականացվել տեղեկատվական տեխնոլոգիաների, հարկ վճարողների սպասարկման, կուտակային և սոցիալական վճարների անձնավորված հաշվառման համակարգի կիրառման, ինչպես նաև 2018 թվականի հունվարի 1-ից ՀՀ-ում կիրառության մեջ դրված հարկային օրենսգրքի շուրջ:

Հաշվետու ամսվա ընթացքում երկու կառույցների միջև իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի և տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

Հաշվետու ամսում կայացել է ԱՀ ֆինանսների նախարարի մամուլի ասուլիսը, որի ընթացքում նախարարն ամփոփել է նախորդ տարվա տնտեսական զարգացումների և հարկաբյուջետային քաղաքականության արդյունքներն ու ներկայացրել առաջիկայում ծրագրվող աշխատանքները:

Հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում տարեսկզբից կատարված փոփոխությունները հարկ վճարողների կողմից ճիշտ ընկալելու ու գործնականում լիարժեք կիրառելու նպատակով ԱՀ ֆինանսների նախարարի 2018 թվականի հունվարի 22-ի N 57 հրամանի համաձայն հունվարի 29-ից մինչև փետրվարի 1-ը սեմինար-խորհրդակցություններ են անցկացվել Ստեփանակերտ քաղաքում և շրջաններում գործող հարկ վճարողների հետ, որոնց ընթացքում ներկայացվել են հարկային հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթներում և մի շարք այլ ենթաօրենսդրական ակտերում կատարված փոփոխությունները, ինչպես նաև 2018 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Արցախի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ԱՀ օրենքը:

Հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով՝ տեղադրվել պարզաբանումներ հարկային օրենսդրությունում կատարված փոփոխությունների և պարտադիր դրոշմանիշային վճարների կատարման վերաբերյալ: «Հարկերի մասին» ԼՂՀ օրենքի 30.1-ին հոդվածով սահմանված կարգով կայքում հրապարակվել է նաև առաջին 300 խոշոր հարկ վճարողների վերաբերյալ տեղեկատվական ցանկերը:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 208, ելքագրվել՝ 177 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 3 գրություն: